ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2026 թվականի թիվ 61-Ա

ք. Երևան

«ԱՐԱՆԵԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՈՒՄԱՆ ԵՀ N 302 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՐԱՆԵԱ» ՍՊ ընկերության հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման մարզային սփռման ԵՀ N 302 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 2026 թվականի մայիսի 25-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է***.

1. Բավարարել դիմումը և 2026 թվականի մայիսի 31-ից ուժը կորցրած ճանաչել «ԱՐԱՆԵԱ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի հունվարի 20-ին տրամադրված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման մարզային՝ ՀՀ Արմավիրի մարզի տարածքում սփռման ԵՀ N 302 լիցենզիան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐԱՆԵԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. մայիսի 27
ք. Երևան